

անձնական կանոն (մաքսիմ) ընդունիմ «*դժուարության պարագային՝ ուրիշներուն կ'օգնեմ, որպէսզի անոնք ալ ինծի օգնեն*» գաղափարը. այն ատեն ես յատուկ նպատակադրում մը կը հետապնդեմ, որ զիս տրամաբանականօրէն կ'առաջնորդէ դէպի՝ *ենթադրական հրամայական*⁽⁶²⁾ (Hypothetical Imperative) եւ *ոսկեայ կանոն*⁽⁶³⁾ (Golden Rule): Նոյնն է նաեւ նպատակադրումի պարագան, նախապէս յիշուած գնացքի կամ ջութակի օրինակներուն: Այսուհանդերձ, օգնութեան կամ երերօգնութեան այս օրինակին մէջ վճռական մեծ դեր կը խաղայ՝ *նպատակ* հասկացութիւնը:

Հիմնականօրէն, մարդոց վարմունքը սերտօրէն առնչուած է *նպատակին*: Վարուիլ, ընդհանրապէս, կը նշանակէ՝ նպատակ մը հետապնդել: Նպատակի պարագային, մեծ կարեւորութիւն ունի նաեւ՝ նպատակի ընդհանրականացումը եւ անհրաժեշտութիւնը. իսկ փիլիսոփայութեան ոլորտի մէջ՝ նպատակին ի յառաջագունէ (a priori) ըմբռնելի ըլլալը: Այլ խօսքով, կարելի չէ հաստատել՝ ջութակ նուագելու անհրաժեշտութիւնը եւ անոր մարդոց համար ընդհանրականացման կարեւորութիւնը, սակայն, համայն մարդկութեան համար անհրաժեշտ է հետապնդել նպատակ մը, ինչպէս՝ *իրերօգնութիւնը*, որ կենսական մեծ կարեւորութիւն ունի եւ միաժամանակ ան ատակ է՝ ընդհանրականացման:

Որպէս եզրակացութիւն կարելի է հաստատել, որ իրերօգնութեան կարիքը խարսխուած է մարդկային բնութեան մէջ եւ կարելի է զայն ի յառաջագունէ (a priori) ըմբռնել, ինչպէս «այրի» բառէն կարելի է ի յառաջագունէ ըմբռնել՝ «ամուսինը մահացած կին» իմաստը կամ «աշխատ» բառէն կարելի է ըմբռնել՝ «շիկակարմիր գոյնով ձի» իմաստը:



Քննադատութիւն

Հակառակ **Ի. Կանտի** բարոյագիտական այս տեսութեան փիլիսոփայական բարձր արժէքին, կարելի է հաստատել, որ ամենօրեայ գործնական գետնի վրայ որոշ դժուարութիւններու կը հանդիպի եւ Կանտի *անպայմանական հրամայականը* (Categorical Imperative) կամ *բարոյական օրէնքը* (Moral Law), իր հրապարակումէն սկսեալ՝ քննադատութիւններու կը բախի:

Կանտի բարոյագիտութեան տեսութիւնը, աւելի կամ նուազ չափով, քննադատած են՝ Կանտի ժամանակակից փիլիսոփաներն ու մտաւորականները, ինչպէս նաեւ իրմէ ետք եկողները: Յիշենք անոնցմէ կարեւորագոյնները. գերման փիլիսոփաներ՝ **Հեգել** (Georg Wilhelm Friedrich Hegel, 1770 – 1831 թ.), **Շոպենհաուեր** (Arthur Schopenhauer, 1788 – 1860 թ.), **Շելլեր** (Max Scheler, 1874 – 1928 թ.), **Հարտման** (Nicolai Hartmann, 1882 – 1950 թ.), **Եոնաս** (Hans Jonas, 1903

(62) **Ենթադրական հրամայականի** (Hypothetical Imperative) մասին, տե՛ս էջ 166:

(63) **Ոսկեայ կանոնի** (Golden Rule) մասին, տե՛ս էջ 167: